

ՕԵՓԻԼՈ

ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ինչ որ խմբագրութեան և Տիօրէնութեան կը վերաբերի ողտք է ուզվել առ ՊԵՏՐՈՍ ԲՈՐՅՈՒՐԱՆ
ՆԱԽ, Պալս Մերժանը Իմամ - Ալ Խան, թիւ 4 : - Անդար նամակ կամ ծրար կը մերժուի : Օրագիւն
ամէն շաբթու հինգշաբթի օրերը կը հրատարակուի : Վեցամիսայ շըմնին գիւնը 20 դրւունոց աշճան
մէջիմ ԿԱԽԵՆԻ վճարել, ամէն թիւէ կրնան սոորադրուիլ : - Դուրս երթալիք Օրագրաց համբու
ծախքը ամսովն փայ է : - Ծանուցման տողը 4 լուրոււ :

ԲԱԺ.ԱՆՈՐԴԱԳ.ՐՈՒԹԻՒՆՔ ԿՐԵԴՈՒՎԱՆ. Կ. ՊՈԼԻՍ ՕՐԱԳՐՈՍ գրասենեակը : - ԹԻՖԼՈ
ՄԵծարդոց Ազգայինդր աղա Երեցեան : - Զմիւնիա Սրբալուսոյ գրասենեակը : - Թէքիւտաղ Պ.
Քագուր Գէմինան : - Կէյլի, Օրթադիւղ, Ղընջըլոր Պ. Խաչատուր Մանուկեան : - Տրապիցօն
Պ. Խոջատուր Էլմասեան :

Ե. Օ. Դ.

Որչափ որ մեր նախորդ թուոյն մէջ
ազդ ըրած էինք թէ, թէրթերնիս դար-
ձեալ հնդեւտասանորեայ է, բայց թէ որ
ողտք եղած քաջալերութիւնը ստանանք
ութ օրեայ կը զարձնենք . ահա բարե-
բախտութեամբ կըսենք որ մասամբ իւիք
մեր նպատակին հանանք :

Ուստի կը ծանուցանենք որ այսուհե-
տե ամեն, շաբթու հինգշաբթի օրերը
պիտի ելլէ Զէֆիւռ, զինը դարձեալ
նոյն, այսինքն վեցամիսեայ շրջանին զինը
արձաթ մէճիտ մը :

Կաեւ կը ծանուցանենք որ Արևելեան
ազգային թատրոնին մէջ ներկայացուած
խաղերէն ընտիր թատերգութիւններ,
ողբերգութիւններ ևս պիտի հրատարա-
կենք ամեն անդամ :

Ուստի կը յաւսանք որ արգոյ Ազգա-
յինք կը փութան իրենց կողմանէ պէտք
եղածն ընելով՝ զմէղ չվատեցնել, և
չզլանալ այն քաջալերութիւնը՝ որ ամե-
նէն տկարն անդամ կը զօրացնէ :

ՎԵՐՍ.ԴՄ.ՁՉ ՎԵՀԱ.ՓԱ. ԿԱՅՍԵՐ

Ի ՊՈԼԻՍ

Թէպէտև մեր օրագիրը քաղաքական
չէ, սակայն բարեգութ կայսեր Եպիպոսոս
ըրած ճանապարհորդութենէն մայրաքա-
ղաք զարձած ատեն անանկ պարգաներ
կային, որոնք մեր ազգին կը վերաբերին :

Արդէն օր առաջ խիստ մեծ պատ-
րաստութիւններ կը տեսնուէին ամէն
կօզմ Նորին Կ. Վէհափառութեան բա-
րեյաջող գալուստը արժանավայել յար-
գանօք ողջունելու համար, և ամեն հը-
պատակ ազգեր, մանաւանդ Հայերը ու
րախութեամբ լցուած կապատին :

Ապրիլ 19 ժամը 8 ին թնդանոթնե-
րու որոտումները Նորին Կ. Վէհափա-
ռութեան ուրախափիթ զարձը աւետե-
ցին, և ամեն ազգի գալրոցական ման-
կունք և Հայերը յատուկ շոգենաւ մը
բոնելով զիմաւորել գացին, գեղեցիկ
ու վայելու զգեստաւորեալ և ներդաշ-
նակաւոր ու քաղցր երգելով Սուլթանին
բարեյաջող գալուստը շնորհաւորելու :
Ժողովրդոց զգացած տրախութիւնը՝ նա
մանաւանդ Հայոց մեծ ու աննկարագ-
րելի էր, շուկաները, տուները, կրտսե-

ները, փողոցները, և եկեղեցիները կան՝ զեղներով, ծաղկներով, շալերով, դրա շահներով և յաղթական գաբնեայ կամարներով, մէկ խօսքով՝ նմանը չտեսնը ուած շքեղ փառաւորութեամբ զարդարուած էին, և ուր շքթ և կիր գիշերները խիստ գեղեցիկ լուսավառութիւններ եղան, և ուրախութեան հանգիս ամեն կողմ կատարուեցան :

Կորին կայսերական Վեհափառութիւնը բարեհաճելով լսել անդամ մ'ալ Հայ ազգի գպրոցական տղայոց երգերը, շաբաթ օրը իրիկուան դէմ տղաքընյուղիս շապիկներով զգեստաւորեալ Սէրակերի Պրան առջևէն անցան, ուր տեղի դէօշիր կը գտնուեր Նորին Վեհափառութիւնը, և նոյն միջոցին սպաշտուակալ մը զալավ տղայոց երգած եգերը ունը թուղթերն առաւ և Ա. Վեհափառութեան մատոյց :

Ավակի օրն ալ Քերայի մէջ խիստ մէծ պատրաստութիւններ տեսնուեցան ուրիշ պիտի անցներ Օգոստափառ կայսրը : Ա. Երրորդութեան եկեղեցւոյ թատրոնին քովի դուռը խիստ գեղեցիկ կերպով զարդարուած էր լէմնի նարին ջի սախոներով, կամուկներով, հաֆն սէներով, մոմերով, ծաղկներով, ծանրագին կերպասներով, և զրօշակներով և՛ : Եկեղեցական դասը զգեստաւորեալ, գպրոցական մանկունք շապիկներով, և աղջկունք ճերմակեղիներ հագած կայնածէին կարգաւ : Նորին Ա. Վեհափառութիւնը անցած ատեն՝ աղջկունք անոնշահոտ ծաղկներ նետելով Սուլթանին հեծածած ծիծած ծիծուն, ոտքերուն առջեր, և “փատիշհըմ տէօլիքթինսէ չօդ եաշա” խոսքը ներգաշնակաւոր ծայնով մը կը հնչէին, և որոնց կը պատասխանէին տը զաքը “ամինի, աղաղակներով” :

Հայոց այս պատրաստութիւնները շատ նշանաւոր էին, և բնաւ չենք վարունիր ըսելու թէ Հայոց աղջին զգաւ

ցած կարգէ դուրս ուրախութիւնը՝ իր ընթացքին մէջ իր Վեհափառ Տերոջը շարունակ հաւատարիմ մսուլու զբաւական մ' է :

Մէր ազգին հաւատարմութիւնը որչափ որ գովութեան արժանի է ամեն ատեն, սա ալ չենք կրնար ուրախալ որ Սամանեան վեհապետներն ալ մէր ազգին հաւատարմութիւնը վարձատրած են միշտ, և թէ Սէնոնց ըրած չնորհումները մէր ազգին համար զմայլելի ու անսպասեն, մանաւանդ Օգոստափառ և առատագութ Սուլթան ՍՊԾԻՒԼ ՍԶԻԶ—ԽԵՍ չնորհացի կայսեր, Որուն ազգատամիտ շրնորհիւը մէր ’ի վաղուց փափաքած Սահմանադրութեան տէլն եղանք : Կեցեց ուրեմն :

ԱՕԳԱՅԻՑԻ

Ուրախութեամբ սրտի կը ծանուցանենք որ ազգային Սահմանադրութեան գործադիր յանձնափողովոյ անդամոց մէջ պատահած անհամաձայնութիւնը վերցաւ . և ապրիլ 20 ին Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ խորհրդարանին մէջ նիստ ընելով՝ Պօլսոյ ամեն եկեղեցիներու թաղական խորհրդականին ’ի ժողովը հրաւիրեց, և ընտրելեաց ցանկը պատրաստելու համար պէտք եղած հրահանգները (թալիմաթ) տուաւ :

Ուստի կը յուսանք որ մէկ քանի օրէն Սահմանադրութեան գործադրութիւնը տէմնելու բարեթախտութիւնը կունենանք :

Պաւաններէն եկած տեղեկութիւնները լուր կուտան որ Սահմանադրութեան վաւերացման և տրուելուն լուրը

նէ պիտի յիշէ որ ես ազնուական եմ» : Թագաւորը վրայ բերաւ ըսելով թէ «Հը-ըամանոցդ մարդ ըլլալը միայն բաւական էր ինձի , սխալցայ . ուրիշ անգամ այս դանգատը չեւ ունենար ինձմէ» :

Ի՞նչ գեղեցիկ սկզբունք , և ի՞նչ գե- վեցիկ պատասխան , և քահանային գան- գատէն շատ աւելի քրիստոնէական և փի- լմանիայական պատասխան :

«Աև» ,

Մէջն Ազէքսանդր Մակեդոնացւոց թագաւորը իր ըրած մէծամեծ յաղթու- թիւններովն հարարտացած և անմիտ փա- ռասիրութեամբ մը ուռեցած ինքզինքը արտուածօրդի սեպելով՝ սկսաւ նաևմակ- ներուն տակը ասանկ ստորագրել «Արա- մազդայ Ամօնի որդի Ազէքսանդր Ազքայ» ըայց Հնդկաստանի մէջ քաղաք մը սկա- չարած ատեն նետով մը զարնուելով քաշած սաստիկ ցաւէն իմացաւ որ ինքը աստուած չէ եղէր , այլ մարդ :

Զգենք Արտաշահի պէս հզօք ինքնաւ- կալի մը գերեզմանին տակէն «աւա՛ղ փա- ռացս անցաւորի» սոռացը , ձգենք նաև Ասումոնի պէս մէկու մը «ունայնութիւնն աղաղակելը , այլ դարձնենք անգամ մը աչքերնիս աւետարանի այն էջն վզայ , ուր ինքն Սխառուած հաւասարութիւն , ուր և խօնարհութիւն կը քարոզէ :

Վերջապէս Աստուծոյ և մարդկու- թեան առջև ամէնքն ալ հաւասար են , և թէ հասարակութիւնը ամեննեին պար- տաւորութիւն մը չունի հարուստներուն բեշերուն առջև ծնրադրելով սորիկաբար անոնցմէ ակնածելու , անոնց կամքը սկաշ- տելու և ինքզինք անոնցմէ ստորին աս- տիճան մէկը սեպելու . վասն զի ասանկ պարտաւորութիւն մը ո՛չ զերբնական և ո՛չ ալ քաղաքական օրինաց մէջ կը նը- կատենք : Գուն շատ հարուստ ես , շատ աղէկ Աստուած քարի վայելում տայ , Աստուած աւելցնէ , մարդ քու ունեցածիդ վոստ աչք չոնկեր , և աւելի ուրախ կը լ-

լայ տեսնելով ազգին մէջ գթած , բա- րեսիրտ և ազգասէր հարաւասներ . բայց թէ որ մարդկութեան պահանջածէն ա- ւելի ելլես հասարակութենէն յարգանք և ակնածութիւն սպասես , ապահով ե- զիր որ չես գտներ , քանի որ զայն քու հարստութեանդ ժառանգորդ չես ըրած :

Մարդիկ՝ պարտաւոր են զիրար յար- գել , բայց ո՛չ մարդկաւթեան պահան- ջածէն աւելի . վասն զի ամսիկ աւելին մարդահանոյութիւն և կեղծաւորութիւն է , որ մեծ մեղք է և թէ հասարակու- թիւնն ալ մեղաց տերը ըլլալ չուզեր երբեք :

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ

Ի՞նչ է որոտումը : — Կայծակին պատ- ռած օդոյն՝ դարձեալ քովի քով գալով միանալին պատճառած շառաջիւնը :

Աս շառացման մէկ մասը մթնոլոր- տին մէջ ելեկտրականութենէն պատ- ճառած քիմիական և ֆիզիկական փո- փոխութիւններէն կը ծագի :

Ինչո՞ւ համար որոտումը փայլատա- կելին քիչ մը ետքը կը լսուի ձայնը :

— Վասն զի որոտման ձայնը իր ըն- թացքը փայլակին լոյսէն շատ աւելի կա- մաց կը կատարէ , և փայլակը որոտումըն մէկ միլիոն անգամ գրեթէ շուտ կը շար- ժի , ասոր համար թէ , որ որոտումը եր- կայն ճամբայ ունի ընելու , փայլակին շատ ետքը կրնայ մինչեւ երկիր համնիլ :

Ինչո՞ւ համար է որ շատ անգամ ան- կամու ու ընդմիջեալ մանչման պէս . կը լսուի որոտումին ձայնը :

— Ասոր համար որ՝ որովհետեւ մը ըր- կալից անմիջ շատ հեռու ըլլալով , և օդին ճօնումներէն ունանք ալ երկայն ճամբայ ընելով , մի և նոյն վայրկեանի մէջ ըլ- նականսապէս շուտով չկրնար մէր ական- ջը համնիլ , այլ հետզհետէ , և ասկէ է որ որոտումին ձայնը մեղի ընդմիջեալ կռւդայ :

Հետեւեալնամակը զրկուած է մեղհրատարակելու համար , որ մենքալ հրատարակելով պատասխանառութիւնը նամակագրին կը թողումք :

Վեծարդոյ Խմբագիր Զեփիւռ Հայրենեաց ազգօդուու համարին

Չեր անկողմնասիրութեան վրայ վաստակացած . կը վարաթամ ներկայիս հրատարակութեան համար Չեր ազատախօս Օրբագրոյն գիմել :

Պետական Թուշնիկ անուն հանդիսին ճդթուոյն մէջ հրատարակուած մեր անձնական պատուցն վերաբերեալ նամակին յականայս պատասխանելու մոօք փետրուար 41 ամսաթուով նամակ մը ուղղած էինք Թուշնիկի Խմբագրին որ դայն եւս հրատարակէ ինչպէս որ խօսատացաւ բայց իր խօսամունքն վաստավեց թէպէտ մենք քանի

քանի անգամ իր այս խօսամնապանցութեան համար ուղղակի իրեն գէմ բողոքեցինք , սակայն իւր խօսամունքն դարձեալ երկրորդելով չ'վրիպեցաւ երբեք իր առջի ընթացքէն , մենք յիշեալ օրագրոյն կարծեցեալ խմբագրին այս ապօրինաւոր վարմանը դէմ թէպէտ մէտ եւ ուրիշ միջոցներ ձեռք առնելու իրաւունք ունինք . բայց մասնւթ ազատաթիւնը ՚ի բոլոր որտէ յարգենուու համար կուզենք որ միայն յիշեալ օրագրոյն այն ընթացքին վրայ մեզի մեկնութիւն մը տայ որուն մէջ մենք կողմնասիրութեան ջերմուգի մը կը նկատեմք որքիչ արատ չ'բերեր իմ բագրական պատուցն եւ կը միանէ լուսագրութեամբ նամակագրի պարոնին պատասխան կը լուսացեալ պատմանքութիւններն առունք որ բոլորվին ՚ի դերեւ ելան ըստ որում փետականութեան նամակ մը զրեցինք յիշեալ պարոնին եւ իր մուս երկու ընկերացն ալ որ Ծնկերութեան Կրգրանտակեղին գոլով մեր հետ տեսնուին , մէկ քանի օր վերջը միայն Սիմոնը կերեւայ եւ փոխանուկ Կեզզունուեղը գոլով չ'արդար չ'արդար կը կարագի իրավիւն ու սիլ կը սկսի : — Պ . ինչ իրաւունք ունիւն ինձի նամակ իրկելու ու ինձմէ առմանկի դրամ կամ տուրակ պահանջելու ո՞վ ես դուն ես քեզ չ'մ ճանշնար եւայն (Պարոնը իր նամակին մէջ այս կտորները լուսթեամբ կը-

* Թողներեն մեղի ամեն անմիք նաև Մեծարդոյ Խմբագրին մը որ յոչ կամաց բռնադտուեալ այս ածականը կուտանք յիշեալ կարծեցեալ Խմբագրին որ երաւամք քիչ արատ չ'բերեր իր պաշտօնին և թէ Խմբագրի մը արժէքն ու անոր արժուա-

խորագիրն հրատարակելու խօսապայած էր . Ակրայիշեալ օրագրոյն ճդ թուոյն մէջ փետրուար 6 ամսաթուով նամակ մը կարդացինք Սիմոն Յ Գրըձեան ստորագրութեամբ , մենք այն նամակին ստորագրածեան տիրոջն ըստելիք չունինք , վասն զի ոչ իւր գրութիւնը եւ ոչ Ծնկերութեան վերաբերեալ ըստաներն պատասխանի տրծանի են . սակայն կէտ մը կայ յիշելու որ այնական անխէնեմիմը խօսքերաւն ուշագրութիւն ու հաւատարման թիւն ընտվներուն վրայ ցաւելով կը ստիպուինք յակամայս հետեւեալ եղեւութիւնն զրի առնել անոնց համար կը օքան ոք յանի գմեղ տմբաստանել ու զրաբարտել կուղեն եւ արգէն այս ըստածիս մէկ մէծ ապացոյցն տեսանք անցեալներն Սասիս Պատուական Լատարոյ ՑՇՑ թուոյն մէջ առանց ապացոյցի փետրուար 43 ամսաթուով վարդապետի մը ստորագրութեամբ հրատարակուած նամակին :

Գըրըձի Պ . Սիմոնը բաւական առենէ ի վեր բաժանորդագրութեան տոմսակի գին 20 դրշ . կը պարտէր ընկերութեան եւ այս երկարութեալ միջոցին մէջ այն զրամին վճարման համար երբէք տուածարկութիւն մը ըստածչինք , վասն զի կը կարծեինք որ յիշեալ պարունակութիւններն առ ուրիշ պարտականութիւններն ալ անթերի կատարելու չ'ախտի դանդաղեր . բայց մեր այս ակնկալաւթիւններն առնենք որ բոլորվին ՚ի դերեւ ելան ըստ որում փետականութեան նամակ մը զրեցինք յիշեալ պարոնին եւ իր մուս երկու ընկերացն ալ որ Ծնկերութեան Կրգրանտակեղին գոլով մեր հետ տեսնուին , մէկ քանի օր վերջը միայն Սիմոնը կերեւայ եւ փոխանուկ Կեզզունուեղը գոլով չ'արդար չ'արդար կը կարագի իրավիւն ու սիլ կը սկսի : — Պ . ինչ իրաւունք ունիւն ինձի նամակ իրկելու ու ինձմէ առմանկի դրամ կամ տուրակ պահանջելու ո՞վ ես դուն ես քեզ չ'մ ճանշնար եւայն (Պարոնը իր նամակին մէջ այս կտորները լուսթեամբ կը-

նամակութիւնը շատ աղեկ կը ճանշնար ու կը յարգենք :

Ցոչ կամաց բանադտեալ ըսենուս պատմանը առ է որ հօ այս նամակին հրատարակմանը վայրուն իր նամակին մէջ այս կտորները լուսթեամբ կը ապահովենք :

ման հողւոյս չիղերը կը թուլցնէին և իւր վեհ կանգնուածքը տեսնելով այն դիցու հին կը յիշէի որ Սումայի սիրոյն արժանի չըլալուն համար քիչ կը մնար ամբողջ բանակ մը սարսափի մատնէր . . . թող ախարհ սիրոյ վրայ ինչ աչքով կուզէ նայի իսկ ես կը գումամ սէրը Երկնային է :

Երգուհին հրեշտակային ձայնը և գեղեցկութիւնը զիս այն աստիճան գրաւած էր որ բոլորովին յափշտակուած և անզգայացած էի, մինչեւ որ քովիս անցնելով ինձ դաշտողի մը չնորհիւ սթափելով գտայ որ ոչ Երգուհին կար և ոչ երաժիշտք և ժամանակն ալ կիս զիշերը անցեր էր, ուստի մէկէն ոտքի ելելով ուղղակի սենեակս գացի գիշերուան մը նացեալ մասը չեմ գիտեր ինչպէս անցնելու :

Անփորձ պատանի մը յայտնի է թէ այսպիսի դիպուածէ մը վերջը ինչ տեսակ ժամեր կ'անցնէ, մանաւանդ զիշերային ծանրաքայլ ժամեր, արդ հարկ չիկայ ինձ ստորագրել որ նոյն զիշերուան մնացեալ մասը առանց ննջելու, առանց կանոնաւոր կերսով խորհրդածութիւն մը ընելու անցուցի և արշալուսոյ առաջն շառաւիզաց հետ նստած տեղէս սենեակէս և պանդոկէն դուրս ելելով ոչոշեցի Երգուհին դմուել բայց ի զուր տեղը բոլոր օրը Երգուհին վնասուեցի, իզուր տեղը ամեն պարտէլ, բուրաստան, ճեմելք, զբօսարան կը մանէի կելքի, անանկ որ վերջապէս ստիպուեցայ քիչ մ'ալ ուրիշ առարկաներու վրայ զարցնել խորհուրդս մինչեւ որ երեկոյ լինի ենոյն պարտեզը երթամ ուր առաջն անգամ տեսայ զինքը . երբ այս որոշմամբ պատուհանի մը առջեւ կանքնած ինչ ընէլքս կը խորհէի, ահա բարեկազմ Պարոն մը մտենալով ինձ կանգնեցաւ և վայրկեան մը երեսս նայելէն վերջը ինդքեց որ Երեն հետեիմ, որուն անմիջապէս ընկերացայ ես առանց բառ մը արտասանելու

մինչեւ որ գեղեցիկ և քարաշէն տան մը առջեւ հասանք որոյ գուռը բաց լինելով ընկերու ամենային քաղաքավարութեամբ զիսներու հրամցուց, մտանքներու և առանց մէկու մը համագիտելու տանը երկրորդ զըստիկոնը ելելով փառաւոր սրահ մը մտանք և հօն նստեցանք . Պարոնը անմիջապէս գլխարկը հանելով հարցուց ինձ “Պարոն կուզէի գիտնալ թէ դուք որո՞ւ զաւակ էք, որ քաղաքէն կամ երկրէն էք, և թէ ինչ պաշտօն զձեղ հոս բերած է” :

— Այդ հարցումներուդ մի առ մի կը պատասխանեմ “ ըսի ծանրութեամբ մը միայն թէ օրինաւոր է կարծէմ, թէ որ նախ զիտնամ թէ որու հետ կը խօսիմ ” “ օրինաւոր օրինաւոր պատասխանեց նա “ զիտցի՛ց ուրեմն որ ես այս քաղաքիս քաղաքավետն եմ ” :

— Լաւ ուրեմն ” ըսի խօսարհութեամբ „ ես Հայու մը զաւակ եմ, ըսիկ Պօլսեցի և հոս եկած եմ աշխարհիս ամենէն զեղեցիկ քաղաքը, տեմնելու ” :

“ Եւ գուցէ ամենէն զեղեցիկ օրիորդները ” ըսաւ պարոնը ծիծաղելով :

— Կատ հաւանական է ” կրկնեցի անտարբերութեամբ մը, վասն զի ինչպէս կը տեմնէր երիտասարդ եմ ” :

“ Եւ սիրահարուած արդէն ”

— Գուցէ ”

“ Մեռեալին հարոնի ”

— Քիչ մը ”

“ Երեք ժամ յափշտակուելու չափ ”

արտեսակ չաշկուն ”

(Ծաբունակէլ)

ԽՄԲԱ.ԳՐԱԹԵՍՄԲ ՄԻՒԱՍ Մ. ՀԱՅԻ ԳԱՓԱՄՐԱՋԵԱԿ

ԵՒ

ՏՆՅՈՒՆՆԵՐԵՍՄԲ

Գ. ԲՈՐՅՈՒԲԱՄԵՍՆԻ

Ա. ՀԱՄԱԳՐԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ
Կ. ՊՈՂԻՍ ԻՄԱՄ ԱՍԱԼԻ-ԽԱՆ